

ՄԻՌԹԻԼ

ՀԱՍՑԷ

M. ARCHAM
Poste Restante
ATHÈNES (Grèce)

«Եթէ չափանորոշութիւն, կուսակցական կոչը հետեւողութիւն, թեթեւամտութիւն, ցուցամուտութիւն և մեծամտութիւն մենէ հեռու ըլլան, և անկողծօրէն միայն հայութեան ապագան խորհիմք, կարող ենք մենք պնդ վերականգնել ու հայութիւնը մօտալուտ կործանումէ փրկել»:

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԱՄՍԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ի. ՏԱՐԻ

1898 ՓԵՏՐՈՒԱՐ ԱԹԵՆԵ

ԹԻԻ 19

Նոր Տարուայ առթիւ Յիշ. նախկին գործառնութեանց ու մեր ուղղութեան վրայ մի համառօտ տեսութիւն:

(Շար. նախորդ թիւէն)

Ասկէ առաջ թերթիս նախընթաց թիւերէն միոյն մէջ հրատարակուած «Ազգային ծրագիր» խորագրուած յօդուածով մը, ծանօթ հրապարակագիր պ. Տ. Երկաթ մեր յիշ. կուսակցութեանց ու խումբերու գլուխներէն շատ օրինական ու բնական գտնելով, զանոնք միասին, համար եղած ջանքերը անտիկ ու ապագային կը նկատէր, միջազգային պատմութեան համառօտութիւնէն այս մասին զօրաւոր ու կենդանի փաստեր ներկայացնելով:

Կուսակցութեանց գոյութեան ու այդ փաստերու ըսելիք չկայ. մեր ազգը՝ թէև փրկելի ու յետմնաց լինելով միւս ազգերու մի ահաբեկ, բնական է որ ունենայ այն համազգայնութիւնը ու պատմական երեւոյթները, զորս ունեցած են անոնք. սակայն այսպէս կուսակցութեանց գոյութիւնը օրինաւոր ու բնական է ըսելով չենք կըրնար անցնիլ անուշադիր, ի նըֆատի չառնելով այն կենսական ու փառեւորագոյն կէտը որը սերտ մտնուելով ունի մեր թերթի ուղղութեան ու ընդհ. գործի յայտնութեան հետ:

Ահա այդ ուշագրաւ կէտը. Միշեւ այսօր տաճարակայ ժամանակամիջոցի մը մէջ, յեղափոխ. այլ և այլ խումբեր, միութիւններ ու կուսակցութիւններ ունեցանք. ասոնցմէ որն որ ինքզինք միասնեքն բաղդատօրէն նիւթապէս ու բարոյապէս զօրաւոր կը կարծէր՝ նա միշտ ձգտում մը, մարմա՛մ մը ունեցած է, իրմէ նուազ զօրաւոր թուածներն ու կուսակցութիւնները իրեն կցելու ու ձուլելու, կամ ճիշդ քառուղի ըսած ըլլալու համար կ'ընչեմ:

Հանրային գործի նուիրուած խումբի մը ու կուսակցութեան մը որը իր վերաբերած համայնքի մը մէջ անհատը ըսել է, ուրիշ մը իրեն ձուլելու կամ կլլելու մասին ունեցած ձկուտմը բնաւ օրինաւոր ու արդար չենք կրնար գտնել. այդ ձկուտմը՝ հսկայն ու հայրենական անձուկ ու եպիքելի նկատումներն ու շահերու վրայ հիմնուած՝ միշտ մեղադարտ ու աղէտալի է, և իրականացումը անկարելի:

Մեր յեղափոխական նախկին շըր՝ ջանի պատմութեան մէջ այս մասին օրինակներ ու փաստեր չեն պակսիր զժողովրդաբար: Միութեամբ կամ համերաշխ գործելու համար, մեր յիշ. խումբերն ու կուսակցութիւնները այլ և այլ ժամանակներ ձեռնարկութիւններ ըրին անկողծօրէն, զիմուներ ընելով ու ժողովներ գումարելով. սակայն այդ գիմուներէ՝ երկար բանակցութիւններէ ու վիճաբանութիւններէ յետոյ վերջապէս միաձայնութեամբ ընդունուած ու հռչակուած միութիւնը և անոր պայմանագիրն ու բանաձևերը չունեցան ոչ մի յաջողութիւն, եսական ու կուսակցական նկատումներու համար: Այս մասին արդէն շատ անգամներ զրուած լինելով մենք չպիտի ծանրա-

նանք այս տեղ: Այսչափ աղէտներէ վերջ, շատ ցաւալի է ըսել որ տակաւին այդ ձկուտմը, այդ նկրտումը մենէ չենք վտարած, ու տակաւին կերպերնք ու կը ջանանք իրացնել զայն:

Մեր այս ըսածներու իբր փաստ մեր ընթերցողներուն կ'ուզենք յիշեցնել՝ շուրջ մի տարի առաջ մեր թերթի մէջ հրատարակուած «Դաշնակցական մը» ստորագրութեամբ յօդուածի խորտակուած պարունակութիւնը, և միևնոյն ժամանակ վառնա լայն տեսած թուողիկեներն ու չըջաբերականները, որոնք գրեթէ յիշեալ յօդուածին միևնոյն միտքն ու հոգին ունէին:

Ազգի մը, ժողովրդի մը անհատները, զանազան միջավայրերու մէջ ապրելով ու տարբեր մեթոտներով կրթութիւն ստանալով, բնական է որ միևնոյն գաղափարը միևնոյն հասկացութիւնը ու զգացումը չեն կրնար ունենալ այն իրերու ու այն ընկերական հարցերու մասին, որոնցմով իրենք շըր՝ ջապատուած են: Ու այս պատճառաւ ստուգիլ յառաջ կուսական կուսակցութիւններն ու խմբակներ, զոր օրինակ Անգլիա, Ֆրանսա և այլն բոլոր ազգերն ունեցած են և ունին տակաւին իրենց կառավարական ու ժողովրդական կուսակցութիւնները, նոյնպէս մեր ազգն ալ թէ՛ Մասնաշարժութեան առաջ և թէ՛ վերջ ունեցած է ոչ-յեղափոխական կուսակցութիւններ, իրենց անուններով մեղ ծանօթ, սակայն անոնց ու մեր յեղափոխական կուսակցութեանց միջև գործի տեսակէտով անգործ տարբերութիւն մը կայ, տարբերութիւն մը, որը մեզ իրաւունք կուտայ ըսելու թէ, անոնք՝ օտար՝ կուսակցութիւնները՝ գործնականին մէջ, ուրոյնութիւն մը, առանձնութիւն մը ունենալ կը զգարին ու կը լինին մէկ հոգի ու մէկ մարմին:

Այդ ազգերու ու պետութեանց մէջ՝ ըսինք կուսակցութիւններ կան. սակայն տեսնուած բան է, որ ասոնք իրենց հայրենիքի ու ազգի, ներքին ու արտաքին գործերը վարելու, անոնց նուիրական շահերը պաշտպանելու համար տարբեր-տարբեր ծրագրերնր, ուրոյն ուրոյն կերպերնր, ընդհ. ժողովներ, անշատ-անշատ բանակներ ու զանազան զբօշներ ունենան. անոնք՝ թէև իրենց գաղափարներով ու ըսկզբունքներով այլ և այլ կուսակցութիւններու բաժնուած՝ սակայն հայրենիքի ու ազգի վարչական, գիմուրական և առհասարակ բոլոր գործերու և հարցերու մասին խորհելու ու գայնս վարելու համար կը միանան մէկ յարկի տակ, մէկտեղ կը խորհին, մէկտեղ կը վիճեն, մէկտեղ կ'որոշեն ու կը ծրագրեն, և վերջապէս իրենց նիւթական ու բարոյական ուժերով միացնալ՝ մէկ ծրագրով, մէկ բանակով, ու մէկ զբօշով կը դիմադրեն իրենց հայրենիքի ու ազգի օտար և թշնամի ուժերուն. բայց մենք...

Մենք՝ մեր յիշ. կուսակցութեան զործառնութեանց ու յարաբերութեանց տեսակէտով այն կուսակցութեանց ոչ մի նմանութիւն չենք ունեցած և չունինք ալ տակաւին: Միշեւ հիմա մերերը տարբեր ծրա-

գրերով, ու տարբեր զբօշներով գործելով երբեք չունեցան միահաղայն և միաժամանակ շարժում մը, շատ պարսպակի անձնապատանուածեամբ մը իրենց ամենաոյննչ ուժերով գէժ եղած են թշնամիին, որը անհունապէս ու անբաղդատելի կերպով զօրաւոր է: Ասկէ առելի այնպանելին ու գաղափարելին ալ կայ. միևնոյն գործին ու նշանակելին նուիրուած այդ պաշտօնական մարմինները, եսական նկատումներու և հաշիւներու համար շարունակ զիբար նախատած, հայհոյած ու փոխադարձաբար իրարու նկատմամբ անհաշտ և հակակիր ընթացք մը ունեցած են: Հոս փաստերն ու օրինակներն առաջ բերելու կարելի չկայ. երկու կուսակցութեանց պաշտօնական թերթերու անցեալ և նոյն իսկ ներկայ թիւերու էջերը այս մասին շատ հարուստ են. մենք մեր ընթերցողներու զայրոյթն ու զգուշացը չզրդուելու համար միայն ակնարկութեամբ մը կը բաւականանք:

* *

Մեր կուսակցութեանց այս կացութիւնը, որ մի հիմնական բարեփոխումի անհրաժեշտագէտ կոթող է և որ մեր ներկայ աղէտից ու թշուառութեան առեկա ահալի ընկուն պատճառաւ, մեր յեղափոխական պատմութեան ամենէն տըխուր ու սեւ էջերը պիտի գրաւէ, ցաւալի է ըսել որ տակաւին անկողծօրէն ու լքօրէն նկատողութեան առնուած չէ զայն վարող պաշտօնական մարմիններու կողմէ:

Անոնք ստուգիլ գիբնք մի ու թէ և այն համար կ'ըն ու փափաքող ցոյց տալով, անոր յայտնութեան և իրականացման անկողծօրէն ջանացողներ կը ներկայանան ժողովրդին, բայց շուրջ մէկ ու կէս տարիէ ի վեր սկսուած բանակցութեան ոչ մի իրական արդիւնք տեսանք և ոչ ալ որոշ ու ստոյգ գաղափար մը կրցանք կազմել անոնց եղբակցութեան մասին: Այս ձեզը ձեզումներու և անյաշողութեան պատճառն ու պատասխանատու կողմը որոշելու վերաբերմամբ, յանդիման և գահավէժ գաղաւթ մը չընելու համար, ստիպուած ենք սպասել միտք տի մէջ հաստատակութիւն սկսած այն պաշտօնավթիքի շարունակութեան աւարտին, որոնք երկու կուսակցութեանց միջև փոխանակուած բանակցութեանց ու կրթակցութեանց պատճենները կը կազմեն:

Ինչ որ ալ ըլլայ, մի ու թէ և այն յաջողութեան մասին միք շատ հասարակ չունինք կուսակցութեանց բարձրագոյն վարիչներու վերայ, որոնք տակաւին իրենց եսերու շուրջ կը զեզբին ու կ'երազեն թէ՛ վերջապէս ուշ կամ կանուխ, ձուլումի գործիքամբ պիտի յաջողին տեսնել յիշ. բոլոր ուժերն ու խումբերը ինքնաբերաբար հասարակ իրենց շուրջ ու միացած: Պ. Տ. Երկաթ ևս մ'ենոյն համազումով իր յօդուածի վերջաբանի մէջ, հրաւեր կը կարգալ բուր յիշ. խումբերու և ուժերու, որ նիւթական ու բարոյական անկողութիւններն անոնք օրուան գործին ու զօրաւորագոյն կուսակցութեանց, զոր ինքն Դաշնակցութիւնը կը նկատէր:

Մեր կարծիքով ծանօթ հրա-

պարակազրի այս հրաւերը՝ իր քառողած միջազգային համառօտութեան փաստերու հակասութիւնը կը լինի, կուսակցութիւնները օր է նախ մի ճնշման և որոշ պայմանն են բու տակ միայն կրնան իրարու զորակցել կամ մեր սովորական հասկացողութեամբ միանալ. ցորչափ այդ օրէնքն ու պայմանները կը բացակային և կուսակցութիւնները միան ներկայ ողբալի գրութեան մէջ, անոնցմէ ո'չ մէկը թո'ղ սին յոյսերով չօրօրուի, կարծելով որ այսպէս կամ այնպէս օրին մէկը յիշ. բոլոր ուժերը կուզան իրեն կը ձուլուին և վերջապէս հայ ազգը կը փրկուի այդ կուսակցութեան հիմնադիրներու ջանքերով և անոր զբօշի ներքե կըուող մարտիկներու արիւնով և իրենք ալ կ'անմահանան: Փառաւորութեան և անմահանալու այդ տենչանքը շատովսմ և գեղեցիկ է. սակայն կըրնայ իրականանալ: Մենք կ'ըսենք ո'չ:

Մեր կուսակցութիւնները գործառնութեան համար իրարմէ տարբեր ծրագրեր ունին. այս պատճառով մէկին՝ իր կարծիքով յարմար սեպած պահուն ընելիք շարժումը կրնայ պատահել և անտարակոյս պէտք է պատահել, որ միւս կողմէ անյարմար և նոյն իսկ վնասակար լինի իր կարծիքով. կամ մէկը իր յիշ. պատգաւատութիւնները կը կանաւոր իր ընտրած այս այն եղանակով ու միջոցներով, որոնք կրնայ ըլլալ որ միւսի կողմէ օգտակար ու ապահով չնկատուի զատ վնասակար ու աղէտալի իսկ կը համարուին:

Արդ, ինչոքեմ ըսէ՛ք, բաբելոնական այս խառնաշփոթութեան մէջ, ո'ր խումբ, ո'ր կուսակցութիւն և ո'ր անհատական արամադիր ոյժ իր նիւթական և բարոյական աշակցութիւնը կը նուիրէ այն կուսակցութեան, որը ենթադրենք թէ իրմէ զօրաւոր եղած ըլլայ: 96 օգոստոս 14ի Դրամատան ցոյցի ժամանակ Հնչ. կուսակցութիւնը Պուսոյ մէջ բաւական ուժեր ունէր իր տրամադրութեան տակ. բայց որովհետեւ նա իր փորձառութեամբ և համազումով զայն օգտակար չի նկատուի զատ վնասակար կը համարէր, չէր կրնար մասնակցել անոր, և չ'մասնակցեցաւ ալ:

* *

Մեր մէջ, կուսակցութեանց գոյութեան պահպանման այն միջոցին ձկուտմին ո'չ նուազ պատճառ եղած է նաեւ ժողովրդական այն համակրանքը, զոր նա ունեցած է ու կ'ունենայ պարբերաբար կուսակցութիւններու մէկի կամ միւսի մասին, անոր երեւութական ուժերն ու շատ փայլուն ցոյց տըրւած գործունէութենէն շնայալով: Ժողովուրդը այնպիսի կացութեան մէջ, որ նա կամայ կամայ ստիպուած է գործելու, զինքը ճնշող գրութեանն ազատելու համար, և կը նախընտրէ գործակցել այն կուսակցութեան, որը բաղդատօրէն զօրաւոր կը կարծէ:

Տակաւին ազգին մէջ յեղափոխական մարմին մը չեղած, գործելու տրամադիր բոլոր ուժերը Արմէնիաի յարեան, քիչ յետոյ երբ-՝ չնչալիք հիմնուեցաւ և աչքի գար-

նող մի քանի գործեր կատարեց, գործողներն անմիջապէս թողին Արմէնիան ու փախեցան անոր: Դարձեալ միևնոյն նկատումներով չէ՛ր որ Պապը-Ալիի ցոյցի ժամանակ Դաշնակցական 5-600 հոգիէ բաղկացեալ մի ստուարաթիւ խումբը Հնչ-չակեաններէ հետ ձուլուեցաւ: Եւ տակաւին մէկէն միւսը փոխադրուելու այդ հասարկը կը շարունակուի, որոյ շնորհիւ Դաշնակցութիւն ինքզինք շատ զօրացած նկատելով ըսկըսաւ պահանջկոտ դառնալ և կարծես Հնչ. նախկին վարչութեան շարունակութիւնը և անոր ուղղութեան ժառանգորդը եղաւ: Բայց այս խառնակ երեւոյթներու տակ կատարուած այն մասնակի ձուլումները կուսակցութեանց տենչանքը չկրցան իրադրո՞ծել և անոնց գոյութիւնը միաց անվթար մերթ զօրաւոր և մերթ անգոր:

* *

Հայկական Յեղափոխութիւնը՝ թէև ունեցաւ իր խոշոր սխալները, սակայն վերջապէս հասած է իր նպատակին գէթ կիսով չափ: Տասնամեայ շատ կարճատեւ ժամանակամիջոցի մը մէջ, շատ թեթեւ և աննշան շարժումներով կարելի չէր ձայնելիք ազատագրութեան մեծ գործը յաջողցնել, ատ մէկ ոտուոմով ազգը փրկել պիտի ըլլար, անօրինակ և գեթ չէր հրաւերով մը: Թուրքիոյ լուծին տակ տառապող և այժմ ազատուած ազգերէն և ոչ մին չէ կրցած ձեռք բերել իր ազատութիւնը այսպէս 10-20 տարուան խիստ սուղ ժամանակամիջոցի մը մէջ: Մեր առաջնախառն 25թուեցիկ նմանող Սեւեռնցիս շուրջ 150-200 տարեկան երկար միջոց մը պարբերաբար մղած յամա կռիւներէ վերջ հաղիւ կրցաւ թօթափել այն անարգ լուծը 1877ի ուսումնական պատերազմի ժամանակ. նպոյդէս Սերպերն ու Հելէնիկը: Կրկնէն տակաւին մեր աչքի առաջ շատ թարմ օրինակ մըն է. նա 1871ի Յունաստանի ապստամբութեան օրէն միշեւ հիմա պարբերաբար կուտեցաւ և իր կռիւները մեր ցոյցերուն ու տէնօրական շարժումներուն պէս չէին: 1866ի ապստամբութիւնը 2-21/2 տարի տեւած է և իրենց գէժ դրազեցուցած է միտաւորապէս 160,000 թրքական զօրքեր, և դեռ անոր ազատութիւնը՝ թէև թղթի վրայ որոշուած ու կատարուած՝ այլ նիւթապէս ձեռք բերուած չէ:

Անկարելին կարելի ընելով պատմական շեղում մը ըրած պիտի ըլլայինք, շատ կարճատեւ ժամանակամիջոցի մը մէջ ազգը փրկել և զայն ազատուած տեսնել ուզելով: մենք կ'ըսենք մասնաւոր, որ մեր աշխարհադրական-ազգադրական դիրքերու, ազգայնական ու կրօնային պայակցութեանց տեսակէտով ոչ մի օտար պետութեան նիւթական և բարոյական պաշտպանութիւնը վայելելու բարեբաղդութիւնը չունինք. պաշտպանութիւն մը որ անհրաժեշտ է և զոր վայելած են վիշալ փորը պետութիւններն ու ցեղերը Թուրքիոյ գարը լուծէն ազատուելու համար:

(Մնացեալը յաջորդ անգամ)

ՄԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԻՆ ՎՐՈՅ

Բ

(Ճար. նախորդ թիւէն)

Արդ, տեսնելով որ Հայ յեղ. ուսակցութեան մէջ գլխադրարար տեսեցան ինքնահաւաններ, փառամոլներ, շահախոյրներ, որք նմանապատանութեան անխոհեմութեան ու տգիտութեամբ գործելով, անսխալութեամբ վնասներ հասցին Հայ ժողովրդին՝ թէև միշտ լղջին օգտակար ըլլալու մտքը, և անի այնպիսի երկիւղով մը ահա-նկեցին, որ սկսաւ սոսկալ, և յետոյ այս վերջին ամենակարեւոր ջակցութիւնը զլախալով հանդերձ՝ այնտեղ և անէծք տեղաց յիշալ կուսակցութեանց (ինչ որ ալ լիւն) նուիրակաւ անուանը, և անց սակայն դիտնալով թէ, կառարեւակաւ կը մեղանշնէ Հնչակ-ան և Դրօշակեան անձնուէր նա-ստակաց պաշտելի յիշատակին դէմ, որոնք թողին իրենց սխրիկները, յոյզն թանկագին կեանքներն, և իրենակելի խանդով մը ի սէր Հայ-նեանց մեռան անտարբեմ:

Ո՛վ ծանծաղամտ ձերեր, ի-մաստակ երկտատարներ, Հինաուրց լլուխներ—Ազգը թող կործանի, բա-ն որ ևս հանդիստ ապրիմ,—ըսող անձնասէրներ պէտք է դիտնալ որ, սպանդարանի փարախին մէջ մոր-թուելու պատրաստուած ոչխարնե-րու կը նմանի, և կը կարծէր որ, ձեզմէ առաջ գոնուողները մեռան, և դուք տաճիկն որին ճարակ ըլ-լալէ փրկուեցաք. բայց չարաշար կը սխալիք, ցորձափ փաթախին մէջ մնաք, պատրաստի զոհեր էք, և տարապայման է ձեր կեանքը ու կը տեւէ այնչափ ատեն, մինչև որ թուրքը Հայոց արեան ծարաւը ըզ-գայ, և իր նուազեալ ատամներով մտի կարտուութիւնը իմանայ. դի-տէք, որչափ զովարար է ձեր արիւնը, և որչափ սննդարար է ձեր միտք: Ո՛ հայ, այս երազաբեր քունիդ ար-թնցի՛ր, հաւատարմով որ, այս ան-տարբերութեան և անհեռատես վար-մանց մէջ որչափ ալ երկար թա-փառես, գիտցիր որ, միշտ փարա-խին մէջն ես, և օր մը թիւրեւ մասաւոր օր մը կարգը քեզի պիտի դայ և պիտի հանդիպիս չորոգա-ցող դանակին խողովոցմանը, պիտի պատախի, չպիտի լսեն, պիտի կող-կողաւ, «Ե՛կ ա՛յ ռուս» ըսելով պիտի սաստեն:—Ախ, Հնչակեան, Դրօշակեան ո՛րք էք, հասէք. մենք ալ Հայ ենք, մենք ձեր արեւակից եղբայրներն ենք, հասէք, ձեր օգ-նութեանը կը կարօտիք, հասէք—զոհելով՝ օգնութիւն պիտի հայցես. այլ աւանդ ոչ որ չպիտի դայ քեզ փրկելու, վասն զի բան մը չսեր-մանցիր, որ հնձան ի զուր են արտասուք ու հառաչանք. վասն զի հարստահարութեան այս անդի-մաղբիկ շարունակութիւնը նախ ձեր անտարբերութեան երևան, երկրորդ կուսակցութեանց բաժանեալ կա-ցութեան արահետ ճամայ գտնե-լով, պիտի դայ ու ջնջէ քեզ ալ, և զու ես վաղ կամ յանաղան պիտի քամես մեր նահատակաց դառնա-դոյն բաժակը, և այնուհետեւ քու մնացած ազգակիցները պիտի ըլլան անաղղ, անհայրենիք, այլակրօն և կատարեւապէս ստրուկ:

Ըստ որում կեանքներին երե-ւակայական ցնորքներով կը սնանի, ներուի ինձ ուրեմն երեւակայակա-ն օրինակով մըն ալ քանի մը խօսք ընել:

—Բեզ կը հարցնեմ, ըսէ՛ տես-նենք, եթէ Դրօշակեան և Հնչակե-ան նահատակաց մէկ քանի ուր-ուակները՝ փառաւոր սեղանի մը վրայ հանդարտ սրտով ծալ ըրած միջոցիդ գէ՛մը կանգնին և ար-քար յանդիմանութեամբ մը քիչ ը-սեն:—Ո՛վ դու, քու պատիւը կեան-քդ, կրօնքդ ու հայրենիքդ փըր-կելու սրբազան ոգով շարժեալ թշնամոյն գէ՛մ պատերազմեցանք, ու գերութեան ժողովուրդ չդիման-թէ և թուլցոյցինը, այլ զիջել չիրաւով մեռանք, բայց դու քու ամէն վնասներովդ դեռ կ'ապրիս,

և ահա ընտանեօր կը դուարձա-նաս և չմեռնելու համար ամէն միջոց ձեռք առած ես, ուրեմն ա-պերախտ, անիրաւ և ազգատեաց մարդ, ի՞նչ իրաւունք ունիս նա-խառել մեր յիշատակը, որ քու սի-րովդ տողորհալ է. ինչպէս նաև մեր կենդանի մնացած անբաւիր և անչափաւոր ընկերաց անարգանք տեղալ, որք մահաբոյր բանտերէն ազատուելով, սոսկալի տանջանքներ կրելով՝ չլիւսացան, ու դեռ ողի ի բռնի Հայրենեաց փրկութեանը համար պատրաստ են զոհուելու: Արդ, քու երկայն խելովդ եթէ այսպէս մեռնիր շահախոհութիւն, փառք կամ հաճոյք է, ուրեմն ի՞նչ ծակէ ծակ մտեր և դրամիդ ծրա-րեն ալ տակը առնը՝ նստեր ես: Օ՛ր անդը, ձգէ՛ զաղթականութեան խորքը, հրամմէ՛, դու ալ միանգամ մեռնելու փորձ մը ըրէ և մեզի բազմակից եղիր, եթէ ոչ լռէ՛, փոխէ սիրտդ ու լեզուդ և աջա-կից եղիր քեզ համար անձնագոհ ըլլալու պատրաստ ազգակիցդ, գիտ-նալով որ ընելիք դրամական կամ գոնէ բանաւոր աշակցութիւնդ նոյն իսկ քու անձիդ պահպանութեանը համար է և ոչ ազգին. զի ազ-գին ամբողջութեանը անհատներէ կը բաղկանայ, և դու այն անհատ-ներէն մին ես և չորսջ կը դե-գերի անխոստակի վտանգը. զի եթէ անհատները ջնջուին կամ ջըր-ւին, ազգն ալ ջնջուած կ'ըլլայ:

Այս աստիք լսելով, կարծեմ ուժգին սարսուռ մը պիտի անցնի թմրած գլխիդ և պիտի ցնցի բո-լոր անդը, ու դու հօր մը, եղ-բոր մը և զաւիթի մը պէս պիտի դրկես այն պահպանող դիտորդե-րը, որոնք քու կեանքդ փրկելու համար պատրաստ են իրենց կեան-քը զոհելու: Այլ սակայն այս պա-քալային մէջ չըլլայ որ մտքէդ ան-ցնես թէ՛ եթէ կուսակցութիւնները չըլլային, մենք այս վիճակին չէ-ինք հասնիր. սխալ է այդ. խորհէ՛ որ դու այնպիսի հոգի մը և զիւ-րի մը լիւր կը գտնուիս, որոյ համար ՁԱ տարի անուշ մահ ու աւերածութիւն որոշուած էր ար-գէն, շարժելի թէ ոչ. ըլլալիքդ այս էր միայն, տարբերութիւնը այս է միայն, որ երբ տունը հրեղէնի տրուած է պէտք է ջանաս որ, կարեւոր կարասիներդ փախցնես քու ապագայ պիտոյցը համար: Ահա այս եղաւ կուսակցութեանց ջանքն ու անձնագոհութիւնը և այսու յաջողեցան դիտաւարտութեան մէջ մտցնել Հայական խնդրը՝ պաշտ-պանել նկրտելով այն պատահալա-նութիւններու գիմարելը, որով միայն փառելի կ'ըլլայ սկսուած շարժումը վատ պահել և շատ կամ քիչ նը-պատակի հասնիլ: Ուրեմն հաւա-տա՛ ճամբարս յեղափոխականներուն, և վստահելի օրինական միջոցնե-րով մի զլանար տալ ինչ որ կըր-նաս, զի հաւատով վերջին ժամն է որ կը հնչէ, ուրիշ կայուն մնալն ունի քու փոքրութեանդ ու չղոյն-թիւնդ:

Ահա միփայն այս տեսութեամբ է որ, առանց ո՛ր և է կուսակ-ցութեան պատկանելու, սակայն և ամենուր համակրելու համարձակե-լով, այս սուրբ գործի ասպարէզը մտայ և քանի մը գողջը քայլեր առի իւր վերջին միջոց՝ ծրարի մը առաջարկելու: (1)

Ազաւոր Ֆարհատ

ԼՈՒՈԹԵԱՆՍ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Արտասահմանէ անկեղծ հայրե-նասէր մը, որ իր բարձրագին բարե-գործութիւններով թէ՛ կուսակցակա-ն թէ՛ ոչ-կուսակցական հայոց ծա-նօթ է, հետեւեալը զրկած է մեզ. զոր սիրով կը հրատարակենք:

(1) Տ. Ս. Ֆարհատի առաջարկած Ծրարիքը տեսնել թիւրթիա Յոթ է-ջին մէջ:

Մ. խ.

... Սմբագիր

Լուսթեանս նկատմամբ դիտու-ղութիւն կ'ընէք: 16 տարինեք իւր-տեսակ տեսակ ընկերութիւններ ու կազմակերպութիւններ տեսայ, ու-րո՛նց ո՛չ մին կանոնաւորութիւն չունենալով հաստատուն հիմ մը չունեցան: Այս երեւոյթը հարկա-գրեց զիս քիչ մը լռել և սպա-սել:

Թրքաշայի մէջ, միայն «Մի-ացեալ Ընկերութիւն» է, որ բա-ւական հիմնական ու կանոնաւոր լինելով՝ հայութեան շատ օգտա-կար եղած է: Յեղ. ընկերութիւն-ները սակայն երբէք անոր ունե-ցած առաւելութիւնները չունեցան, այն պատճառով որ յիշախոհու-թիւնը անոնց մէջ նոր սկսած էր ու իրենք չունէին որոշ գաղա-փարներ և հիմու վարկէնք: Իմ կարծիքով, ես գերազանց գտած եմ առաւելաբար, որոնք իրենց յեղափոխական գաղափարներու ա-ռաւելութեամբ Թրքաշայի առաջ-նորդները եղած են, տաքածելով անոնց մէջ յեղափոխական գաղա-փարներու հարկաւոր կարգապահու-թիւնը (discipline). Թրքաշայի իւ-րենց յեղափոխական բարգաւաճու-մը առաւելաբար պարտելով, ներ-կայիս մէջ երբէք իրաւունք չու-նին անոնց հետ այսպէս վարուե-լու, սերմանելով խտրութեան ու տառապանքի ոգիներ երկու հարա-զատ, այլ երկու օտար ու ծանր լուծիւր տակ տառապող եղբայր-ներու մէջ:

* *

Կուսակցութեանց բազմաւառու-րուն պատճառը եղած է պ. Փոր-թուգլան, որ մինչեւ այսօր ա-նոնց հակառակ գրեթէ չյոգեցու-ն: Պ. Փորթուգլան իր թերթի հը-քատարակութիւնէն յետոյ, իր նա-խագահութեան տակ հիմնեց «Հայ-րենասիրաց Միութիւն Հայոց»ը, որ յեղափոխական մարմին մը պա-հանջած կազմակերպ մը վարչակա-ն պայմանները չունէր: Նա կը հա-ւատար թէ այդ պայմանները ու-նենալու պէտք չկար, թերթի մի-ջոցով, լոկ խօսքով Հայ ժողո-վարը տակաւ առ տակաւ հրաջըով մը կը պարտաւորուէ իրենքին, ու յարմար բոլորին ապստամբելով՝ անվերջ կ'ազատի: Այս համոզու-մով նա պէտք չտեսաւ Մայր-եր-կին մէջ առաքելները գրեթէ ու կազմակերպութիւններ կատարել, ու-րք միայն միջոցն էր յեղափոխու-թիւնը գործնականապէս տարածե-լու ժողովրդի մէջ: Այն ատեն, երբ թուրք հիմնական պէս չըրս աչքով չէր հսկեր, շատ հեշտ էր այդ միջոցները ի դուր գնել. բայց նա չըրսաւ ու հիմա ուրիշները կը մեղադրէ:

1887-88. Թուականէն առաջ, տակաւին Հնչ. կուսակցութիւնը չի կազմուած, առաւելագոյն գործիչներ՝ պ. Փորթուգլանի գլխավոր թա-նակցութեան կը մտնէին գործիւր. «Հայրենասիրաց»ին հետ, որուն նախագահը իրեն էր: Բանակցու-թեանց մանրամասնութիւնները զը-բելու հարկ չկայ, արդիւնքը ան-յալող եղաւ, դուր ամէն ոք գիտէ:

Մենք այն ժամանակ մեր ե-րեք ընկերներով Արմէնական լի-նելով՝ «Օժանդակ Ընկերութիւն» մըն ալ ունէինք, որ պատճա-պէս կապուած էր «Հայրենասի-րաց»ին:

Պ. Փորթուգլանի ետական ու պահանջարկ պայմանները առաւա-հայ ուսանող-գործիչներու միու-թեան յոյսը ի դերէ հանած էին, որով անոնք հարկադրուած «Հըն-չակ» թերթի հրատարակութեան ըս-կան ու Թրքաշայատանի այլ և այլ կարեւոր տեղերը առաքելներ իւրարկելով, գործնական յեղափո-խութեան հիմը դրին «Հնչակեան կուսակցութեան» անունով:

Կարճ միջոցի մը մէջ արդէն կազմուած էր մասնաճիւղեր, և ամէն ուրք խառնալու և յու-սալից ոգեւորութիւն մը կը տիրէր: Այս նպատակաւ տպագրութեանց տակ, չուշացան հրատարակ գալու յեղափոխական շարժումներ, որոնք

Հայութեան համար բոլորովին նոր երևոյթներ լինելով ժողովրդին հա-ւատ և յոյս ներշնչեցին, ու նա սրտագին փարեցաւ նոյն կուսակ-ցութեան: «Հայրենասիրաց»ը սկսեց տատանուիլ ու օրօրուիլ, 96ի վեր-ջերը վերջապէս քնացաւ—ոչնչացաւ: Ծատ դրամներ ու նպատներ ու-ղարկած էինք անոր, չենք գիտեր ի՞նչ եղան: Ծատ ամօթալի ու վտալի իրողութիւններ կատարուե-ցան, որոնց յայտնութիւնը օգտա-կար ըլլալէ աւելի աղէտալի լինե-լուն համար՝ խոհեմութիւն կը հա-մարիւր լռել անոնց մասին:

* *

1890ի Գում-Գալուի Ա. ցոյ-ցէն յետոյ Հնչակեան կուսակցու-թեան տակ գործելու սկսած էինք, և մեր մօտ սենեկը անոր առաք-եալները, որոնք ցոյցէն յետոյ տե-ղւս ապաստանած էին: Միևնոյն ժամանակ մեր նիւթական նպատ-ները ուղարկելու չէինք թերանար Լօնտօն հրատարակուած «Հայաս-տան»ին, որուն խմբագիրները կը խօստանային երեք տարեկէն Հա-յաստանը աղատել,—թիւրեւ իրենց «Հայաստանը»: Այսպէս կրկնակի յոյսերով կը շարունակէինք մե-րովման մասնակցելով գործին: Յե-ղափոխութիւնը գրեթէ բոլոր Հա-յերուս համար նոր էր տակաւին, ու մենք մեր ընկերքի մասին ոչ մի որոշ գաղափար ու գիտակցու-թիւն չունէինք: Հնչակեան կու-սակցութեան ծրարիքը չտեսած, չքննած անոր փարած էինք: Ժա-մանակ անցաւ ու մենք ուղե-ցինք անգամ մը աչքէ անցնել ծը-րարիքը: Միւր կարող ու փորձա-նու ընկերները դայն ուս մնասի-րելով, անոր սկզբունքները մեր ազ-գի ու միջավայրի պահանջներու հարմար գտան: Մենք ալ չէինք կրնար չընդունիլ մեր ընկերներու վիճիւր, որոնց անկեղծութեանը վրայ ոչ մի կասկած չէինք ունե-ցած: Այդ օրէն Դաշնակցութեան մէջ մտանք ու հոն ենք մինչեւ այսօր:

Սոյն կուսակցութեան մէջ թէ թրքաշայ և թէ առաւելագոյն բազ-մաթիւ գաղափար գործիչներ կան, և նախապէս Հնչ. կուսակցութեան պատկանող ու մեզ ծանօթ, գրե-թէ բոլոր լաւագոյն գործիչները անոնց միացած են: Միւր անձնա-կան կարծիքով, յեղ. մարմինե-րու մէջ իւր լաւագոյն կուսակ-ցութիւն՝ Դաշնակցութիւնը զը-տանք, իր ծրագրի պատշաճու-թեան ու վարչական կազմակեր-պական օրինաւորութեան ու կանո-նաւորութեան տեսակետով: Հնչակե-աններու պէս հասնող կնիք մը չի-նելով՝ կեղծ տոմսերով դրամ շըր-թելու անկարող կը լինի. կօմի-տէթներու կնիքները կը տրուին կամ պիւռօներու և կամ կեղծոնական կօմիտէներու կողմէ: Հրապարակ հանուած տոմսներու մէջ գեղ-ծումներու տեղի չտալու համար, դրամատան մը յատուկ օրինա-կան ձևակերպութիւններով ճշդեալ կիրառութիւնը ունի. ոչ մի գոր-ծիչ առանց տոմսի, ընկերք մը կամ ժողովրդական անհատ մը 5 փարա կարող չէ առնել: Հակա-ռակ այսչափ հոգածութեան ու հսկողութեան, եթէ երբէք պատա-հին զեղծումներ, զեղծանդներ կը վտարէ իր մէջէն, ու անոնց ար-ժանի պատիժներ տալու մասին երբէք անհոգութիւն չցուցներ: Պու-կարները կեղծարարներու ու զեղ-ծանդներու նկատմամբ ասկէ ա-ւելի խիտ կը վարուէին. անոնց գործարարած պատժը՝ մ'ա հ ու պ ա տ ի ժ էր: Անոնք շատ բա-րեբաղդ էին, ունենալով մի հիմ-նական ու ընդհանրական ազգային յիւր. ընկերութիւն, մի կնիք և մի դրօշ: Բայց մենք իսկապէս շատ զփախտ ու թշուառ ենք մեր յե-ղափոխական կուսակցութեանց յա-րանումներին հասնող շատութեան պատ-ճառաւ:

* *

1895 օգոստոս 24ին Բարիդի

մէջ «Հայական Կեդր. Միութիւն» անունով ընկերութիւն մը հաստա-տուեցաւ, որը կազմուած էր շատ ծանօթ կարող ու վտանգելի անձ-նաւորութիւններէ: Ընկերութեան նախագահն էր Տեալ Մ. Ձերազ, գանձապետը՝ բարեխառակ Զուհր Սպեոտ, քարտուղարը՝ Յովհաննէս Գալանեան ու հաշուակալը՝ Միհ-րան Գալաբեկեան:

96 փետրուար ամսու մէջ պ. Յովհ. Գալանեանի հետ տեսակցու-թիւն մը ունեցանք միութեան մա-սին. նա միջոց չունէր երկարօ-րէն մեր մօտ մնալու, Տէրունեան Մկրտիչ վարդապետի հետ միու-թեան առթիւ բանակցութիւններ պիտի կատարէր ու արդիւնքը ան-կէ հասկնալ մեզ յանձնարարելով մեկնեցաւ:

Ծատ չանցած, թուրք կառա-վարութեան կաշառուած պուլկար պետական մարդոց ձեռնարկութեամբ, Տէրունեան վարդապետ վառնայի դպրոցին մէջ այրուելով թուրք կա-ռավարութեան ներգործեան զոհ գնաց:

Այս քստմնելի դաւադրութեան շարժառիթի մասին վերապահութեամբ Ձեզ կը տեղեկագրենք համառօտիւ հետեւալը, որ մանրամասնութիւ-նով ձեռք բերած ենք Սթանպու-լիքեան կուսակցութեան պատկա-նող արժանահաստ անձնաւորու-թիւններէ:

Թուրք կառավարութիւնը տես-նելով որ Տէրունեան վ. ինչպէս ի Պուլկարի, նոյնպէս ամէն եր-կիւր ուր որ կ'իրթայ Հայ ժո-ղովուրդէն շատ համակրալիք ու յարգալիք ընդունելութիւն կը զըտ-նէ իր անկեղծ ու համոզիչ խօս-քերով, և միութեան մասին ը-րած եռանդուն ջանքերով, փա-սակար ու վտանգաւոր կը նկատէ զայն, և վերջապէս կը յաջողի զայն ոչնչացնել Պուլկար կառա-վարութեան մի ապրիտ պաշտօն-եայի միջոցաւ:

Այժմ ամէն Հայ թիւրեւ գար-մանայ թէ, աւագակային կատա-վարութեան մը գալելի ու ան-տանելի լուծէն հալու ազատող Պուլկար կառավարական պաշտօնէ-ութիւնը ինչպէս գործիք ու մի-ջոց դարձաւ այսպիսի անմեղի մը դաւաճանութեան գործին մէջ: Ռա-կայն դարմանալու պէտք չկայ, երբ ի նկատի առնենք իրենց ազգային շահերու հոգածութիւնն ու պաշտ-պանութիւնը, որը գերազանցապէս պէտք է նախապատուութիւն ունե-նայ օտարի շահերու պաշտօնա-թեան քով: Նոյն միջոցին իրեն-նին վաւերացման խնդրը առ կախ լինելով, Հայ կղերականի մը ոչնչա-ցումը չնորժով փոխարինութիւն մը կը լինի այդ խնդրի լուծումի, ու կը վերջանայ:

Բարեգի Կեդր. Միութիւնին ալ մեր կարողութեան համաձայն, մեր նիւթական նպատակները տուինք, որոնք ի վերջոյ նոյնութեամբ հրա-տարակուած տեսանք L'Arménie մէջ. սակայն ի՞նչ յղորդութիւն ունեցան և հաւաքուած զորամերը ո՛ր մնացին չենք գիտեր:

* *

Հիմա ալ, «Միութիւն» թեր-թը կը հրատարակուի, որը կու-սակցութիւնները միացնելու համար շատ շահեկան ու օգտակար տե-սութիւններ և յօդուածներ կը պա-րունակէ: Ուղարկութեամբ կը դի-տենք անոր և կ'ըստանանք թէ պի-տի կարենա՞յ միացնել կուսակցու-թիւնները, եթէ ոչ ինքն ալ մի նոր կուսակցութիւն պիտի ըլլայ:

Մի քանիներէ լսածնուս նայեա-լով, «Միութիւն» կը հրատարակէր եղբւր պ. Արփիարի խորհրդով և մասնակցութեամբ, Դաշնակցութիւ-նը տապալելու համար: Եթէ ըս-տուելու այսպէս է, գործը առաջ չընթար ու չյաջողիր: Դաշնակ-ցութիւնը այս պարոնի վատուեալան նկատմամբ շատ մ, պաշտօնական թղթեր ու վտտեր ձեռք անցը-նելով, ասկէ առաջ զայն տ է ու-ր ի վ մի ենթարկած էր: Այս մար-դը յիշալ կամ յանիրաւի ժողո-վրդին համար արատաւորեալ ու

